

**ՀՀ Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի
շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա կապակցությամբ**
31.08.2015



Սիրելի ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ

Շնորհավորում եմ ձեզ Գիտելիքի օրվա և սեպտեմբերի 1-ի կապակցությամբ: Ողջունում եմ բոլորին նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, իսկ առաջին անգամ դպրոց ոտք դրած մեր առաջին դասարանցիներին՝ ուսումնառության առաջին տարվա առթիվ:
Մաղթում եմ բոլոր երեխաներին հաջողություններ ուսման մեջ, լուսավոր ապագա:

Սեպտեմբերի 1-ը ազդարարում է ուսումնական տարվա սկիզբը: Այն նաև գիտելիքներով հարստանալու, իրական արժեքներ ճանաչելու և նոր նպատակներ կյանքի կոչելու սկիզբ է: Սիրելի դպրոցականներ, մաղթում եմ ձեզ բարձր առաջադիմություն, իսկ մանկավարժներին՝ հաջողություններ իրենց շնորհակալ աշխատանքում:

21-րդ դարը գիտելիքի դար է, պետությունն ուժեղ է իր կրթված քաղաքացիներով: Համոզված եմ, որ ուսումնառության տարիները մեր դպրոցականների համար կդառնան իրենց ունակությունների դրսևորման, գիտելիքների ձեռք բերման պատասխանատու և կարևոր շրջան, որի արդյունքում մենք կունենանք հայրենասեր, կրթված և բարեկիրթ քաղաքացիներ:

Մաղթում եմ բոլորին առողջություն, ուժ, կորով և հաջողություններ իրենց նախաձեռնություններում:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՌՈՒԲԻԿ ԱՐԱՐԱՄՅԱՆ